ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 1894-1902ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Բանալի բառեր-Կովկասահայ բարեգործական կազմակերպություններ, բարեսիրական ծրագրեր, Մ.Թումանյան, Բ. Նավասարդյան, Գ.Արծրունի, Սոֆիա Արղության-Երկայնաբազուկ, նվիրատվությունների հավաքագրումներ, ժողովրդական մեծ աղետներ,թուրքահայ գաղթականներ,երաշտից վնասվածներ:

Հայոց բազմադարյան 19-20-րդ դարերը իրավամբ կարելի է համարել հուսահատության, ձգտումների, լավագույն սպասումների, ինչպես նաև ողբերգությունների, հիասթափությունների, մի բարդ և հակասական ժամանակաշրջան: Եվ պատահական չէ, որ հիշյալ ժամանակաշրջանի շատ խնդիրներ, այդ թվում նաև բարեգործական կազմակերպությունների գործունեությանը վերաբերող, եղել և մնում են ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Դա վերաբերում է նաև Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը: 1877-1878թթ. պատերազմից հետո, երբ հազարավոր արևմտահայեր հարկադրված գաղթեցին Անդրկովկաս, հատկապես Թիֆլիս, հայ գաղթականությունը մահանում էր սովից, վարակիչ հիվանդություններից. նա կարոտ էր անմիջական օգնության: Գաղթականների այդ ծանր վիճակը ծնեց ընդարձակ բարեգործական կազմակերպություն հիմնադրելու գաղափարը: Հայ գաղթականներին օգնելու նպատակով բժիշկ Բ. Նավասարդյանը 1880թ. «Մշակի» էջերում բազմիցս հանդես եկավ բարեգործական ընկերություն հիմնադրելու առաջարկությամբ:[1] Անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների ավարտից հետո, 1881թ. նոյեմբերի 15-ին, Բ.Նավասարդյանի, Գ.Սունդուկյանի, Գ.Արծրունու և մի խումբ այլ մտավորականների կողմից Թիֆլիսում հիմնադրվեց Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերությունը:[2]

Ընկերության նպատակը չափազանց ընդարձակ էր, այն է՝ «նպաստել լուսավորության տարածմանը հայերի մեջ,Կովկասում և Անդրկովկասում, օգնել նրանց նաև նյութապես»:[3] Կարճ ժամանակ անց, կովկասահայ բարեգործականը, դառնալով համազգային բարեսիրական կազմա-

[1] Մշակ, Թիֆլիս, 1880, N88:
[2] ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.2, թ.198:
[3] ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.296, թ.5:

կերպություն, իր մասնաճյուղերի բավականին լայն ցանցի շնորհիվ սկսեց լուրջ գործունեություն ծավալել կրթության, լուսավորության, դպրոցաշինության, ինչպես նաև աղքատախնամ և գաղթականախնամ ասպարեզներում: Ակնհայտ է, որ բարեգործականն առաջին հերթին օգնության ձեռք է մեկնել հայության որբ ու անօթևան, գաղթական ու անպաշտպան խավերին՝ ձգտելով ուժերի ներածին չափ նրանց համար կյանքի տանելի պայմաններ ապահովել: Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը բարեսիրական լուրջ ծրագրեր է իրականացրել նաև բնական աղետների, համաճարակների ժամանակ: Այժմ, փորձենք առավել հանգամանալից կանգ առնել ու վերլուծել ընկերության գործունեությունը գաղթականների շրջանում:Երաշտի հետևանքով 1893թ. Անդրկովկասի մի քանի շրջաններում, գլխավորապես Երևանի նահանգում,Կարսի մարզում տեղի են ունենում հացահատիկի գնի թանկացումներ, որի հետևանքով հայ ազգաբնակչության աղքատ խավերի շրջանում սով է սկսվում: Բարեգործական ընկերության խորհուրդն ազատ գումար չունենալով, միակ հնարավոր միջոց համարելով նվիրատվությունները, այդ նվիրաբերված գումարները որոշում է որպես օգնություն տրամադրել երաշտից վնասված գյուղացիներին: Վերը հիշատակված աղետալի շրջաններում երաշտից տուժածներին անգնահատելի ծառայություններ են մատուցել նաև տեղական վարչությունները՝ Կարսի, Կաղզվանի, Երևանի, Նոր-Բայազեդի, Ալեքսանդրապոլի: Ազգաբնակչությանը սովամահությունից փրկելու համար Ալեքսանդրապոլում և Կարսում ձրի ճաշարաններ են բացվում, բոլոր վարչություններն ալյուր ու սերմնացու էին գնում և բաժանում սովատանջ գյուղացիներին:Այսպես,օրինակ հայտնի է, որ 1894թ.ընթացքում խորհուրդը սովյալների օգտին զանազան տեղերից, նվիրատվություն է ստացել՝ 7546ռ. 94կ. գումար և այդ գումարից Կարսի վարչությանն ուղարկվել է 1817ռ.20կ.,Ալեքսանդրապոլին՝ 1400ռ., Նոր-Բայազեդին՝ 1600ռ.,Կաղզվանին՝ 700ռ., իսկ Երևանին՝ 1000ռ. Այսինքն՝ ընդամենը 6517ռ.20կ. գումար: Ընդ որում իր մոտ մնացած գումարից մասնավոր նպաստներ են տրվել նաև աղքատներին և գաղթականներին Թիֆլիս քաղաքում:

Ի դեպ, դեռ 1894թ. սարսափելի սովի հետևանքները նոր վերացած, անակընկալ կերպով հայությունը բախվում է մեկ այլ ահռելի աղետի հետ: Այդ աղետը 1894թ. ամռանը Սասունում տեղի ունեցած կոտորածն էր: Այդ կոտորածը դարձավ այն արյունալի իրադարձությունը, որին հաջորդած մի քանի տարիների ընթացքում արևմտահայությունն անխնա սրի քաշվեց սուլթանական կառավարության կողմից՝ տալով տասնյակ հազրավոր զոհեր: Կոտորածի հետևանքով հարյուրավոր հայ փախստականներ հայտնվեցին աշխարհի զանազան վայրերում:Կովկասը իբրև դրացի երկրամաս շուտով վերածվեց փախստական բազմության մեծագույն մասի

ապաստարանի: Կովկասահայությունը ստեղծված ծանր իրավիճակում հարկադրված էր իր վրա վերցնել թուրքահայ գաղթականներին պատսպարելու, նրանց կարիքները հոգալու գործը: Միանգամայն հասկանալի է, որ այդ դժվարին և պատասխանատու գործի մեջ չէր կարող իր խոշոր ներդրումը չունենալ Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը: Ընկերության Խորհուրդը 1895թ. հուլիսին Մուշից ստանում է Առաջնորդարանի նամակը, որում նշվում էր Սասուն-Տալվորիկի 40-ից ավելի գյուղացիների սովի մատնված լինելու մասին՝ խնդրելով շուտափույթ օգնության հասնել և փրկել կոտորածից հրաշքով ողջ մնացածներին: Բայց Խորհուրդը ոչինչ չէր կարող անել, քանի որ ընկերության կանոնադրությունը թույլ չէր տալիս գործել Կովկասի սահմաններից դուրս:Արդեն 1895թ. աշնանը կոտորածներ են սկսվում Տրապիզոնում և նրա հարակից շրջաններում: Նույն թվականի նոյեմբերի 13-ին Վիրահայոց թեմի առաջնորդ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցը խորհրդին է հղում մի գրություն, որում հայտնում էր, որ Թուրքիայից գաղթել են ավելի քան 400 թուրքահայեր, որոնց մեջ մեծ թիվ են կազմում կանայք, ծերերն ու երեխաները: Թեմակալ առաջնորդը նշում էր, որ նրանք իսպառ զուրկ են ապրուստի որևէ միջոցից և անհրաժեշտ է անհապաղ օգնության հասնել, ու հնարավորինս արագ փրկել նրանց սովամահությունից: Այդ իսկ պատճառով նա խնդրում է Խորհրդից՝ ընկերության Բաթումի տեղական վարչության միջոցով այդ թշվառներին առժամանակ պատսպարել ու խնամել: Միևնույն ժամանակ Գևորգ արքեպիսկոպոսը տեղեկացնում էր, որ կաշխատի որքան հնարավոր է արագ ընկերությանը տեղեկացնել ծախսերի գումարների մասին, քանի որ արդեն կարգադրել է քահանաներին հանգանակություն կազմակերպել: Բարեգործականի խորհրդի անդամները նկատի ունենալով առաջնորդի նամակը, այն կարծիքն են հայտնում, որ կանոնադրության պարագարաֆ 2- ի է կետի հիման վրա ընկերությունը պետք է օգնի տառապյալներին ժողովրդական աղետների ժամանակ և ներկա հանգամանքում 400 թուրքահայերի գաղթը Կովկաս, որոնք սոված ու անօթևան էին, իսկապես աղետ պետք է համարվի, ինչպես նաև՝ քանի որ գաղթական հայերն արդեն Կովկասի սահմաններում են գտնվում, նրանց օգնելը համընկնում է ընկերության գործունեության ոլորտին:[1]

Ընկերության վերաբերյալ պահպանված արխիվային նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Կովկասի հայոց բարեգործական ընկերության խորհուրդը համապատասխան որոշում է ընդունել Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցի կողմից արված այդ առաջարկի առիթով, քանի որ բարեգործականի խորհուրդն այդ առաջարկի հետ կապ-

[1] ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.38, թ.103-104:

ված հեռագրել է Բաթումի տեղական վարչությանն՝ անհապաղ օգնություն հասցնել գաղթականներին, միևնույն ժամնակ օգնության ձևն ու եղանակը թողնելով այդ իսկ վարչության հայացողությանը, միայն որոշելով այդ նպատակի համար Բաթում ուղարկել 1500ռ. գումար:Ուստի, հասկանալի է դառնում, որ Կովկասի բարեգործական ընկերությունն ուժերի ներածին չափով օգնություն է ցուցաբերել՝ սնունդ, դեղորայք, հագուստ և ապաստան տրամադրել հարյուրավոր հայ գաղթականների: Ընկերությունը իր հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով Բաթումի տեղական վարչության վրա, աշխատում է ավելի արդյունավետ դարձնել ցույց տրվող օգնությունը: Բաթումի վարչությունը շատ արագ ծախսում է գաղթականների համար նախատեսված գումարը, քանի որ շատ մեծ էր կարիքը: Արքեպիսկոպոս Գևորգ Սուրենյանցը շուտով Խորհրդին է ուղարկում 1500ռ. գումար, որը հանգանակվել էր Թիֆլիսի հայոց եկեղեցիներում: Բարեգործականի Խորհուրդը 1895թ. նոյեմբերի 18-ին Բաթումի վարչությունից համապատասխան գրություն է ստանում, որ ի նկատի ունենալով խորհրդի կարգադրություններն ամեն ջանք կգործադրի գաղթականների խնամքի համար ուղարկված գումարները նպատակային կերպով ծախսելու:[1] Որոշ ժամանակ անց արքեպիսկոպոս Սուրենյանցը ևս 1200ռ. գումար է ուղարկում, որից 1000ռ. փոխադրվում է Բաթում, իսկ 200-ը՝ որպես նպաս բաժանվում է Թիֆլիս եկած գաղթականներին:[2] Չնայած թեմակալ առաջնորդ Սուրենյանցի և ընկերության Խորհրդի ձեռնարկած գործուն քայլերին, այնուամենայնիվ, Թուրքիայից Բաթում փախչող գաղթականների թիվը գնալով ավելանում էր, և նրանց կարիքները հոգալու համար օրեցոր ավելի մեծ նույթական միջոցներ էին պահանջվում: Հետևաբար, արհրաժեշտ էր առավել ակտիվ ու արդունավետ ծրագրեր իրականացնել աղետալի վիճակում հայտված գաղթականներին կորստից փրկելու համար: Այդպիսի գործուն քայլերից կարելի է համարել այն, որ Բաթումի տեղական վարչությունը սկսում է փորձել աշխատունակ գաղթականների համար աշխատանք գտնել, իսկ ովքեր անկարող էին աշխատել՝ նպաստներ տրամադրել: Վերահաս ցրտերից մերկ ու սոված փախստականներին փրկելու նպատակով, Խորհուրդը ձեռնամուխ է լինում նաև հագուստ հավաքելու գործին: Կարճ ժամանակահատվածում նրան հաջողվում է հագուստ հավաքել և ուղարկել Բաթում: Բաթումում գտնվող գաղթականներին օգնելու, նրանց կարիքները քիչ թե շատ բավարարելու նպատակով որաշակի քայլեր է ձեռնարկում «Հայուհյաց Բարեգործական Ընկերությունը» ինչպես նաև իշխանուհի Մարիամ Թումանյանը, Սոֆիա Արղության-Երկայնաբազուկը և այլոք:

[1] ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.38, թ.105-106:

[2] Տես նույն տեղում, թ.107-110:

Նրանք խորհրդի գրասենյակ են ուղարկում մեծ քանակությամբ տարբեր տեսակի հագուստ, կոշկեղեն՝ խնդրելով այն բաժանել գաղթականներին: Համաձայն ներկայացված ցուցակների՝ գաղթականներին նվիրաբերվել էր ընդամենը՝ 474 կտոր հագուստ, 133 զույգ կոշիկ և գուլպա: Խորհուրդը նվեր ստացած ողջ հագուստն ու կոշկեղենը ուղարկում է Բաթումի վարչություն, հրահանգելով այն անհապաղ բաժանել առավել կարոտ գաղթականներին:[7] Ընկերության արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 1895թ.ընթացքում Բաթումում և Թիֆլիսում գաղթականներին օգնելու համար ընկերությունը՝ 2700ռ. գումար է ծախսել: Սակայն հայությանը դեռ ավելի մեծ աղետներ էին սպասվում, քանի որ կոտորածները Տրապիզոնում ազդանշան էին ավելի մեծ ու ահավոր իրադարձությունների, որոնք տարածվեցին Էրզրումում, Վանում, Դիարբեքիրում և այլ հայաբնակ վայրերում: Հիշատակված ողբերգական իրադարձությունների հետևանքով հայ գաղթականության թվաքանակը գնալով հասնում է ահավոր մեծ չափերի: Արդեն ռուս-թուրքական սահմանագլխին, երեք հիմնական կետեր են գոյանում, ուր խմբվում էին հայ փախստականները: Հիշյալ կետերն էին Կարսը, Կաղզվանը և Իգդիրը: Առավել ծանր կացություն է ստեղծվում, երբ 1896թ. աշնանն այդ կետերում են խմբվում հարյուր հազարավոր մերկ ու սոված փախստականներ: Նրանք կորցրած լինելով իրենց հայրենի օջախներն ու հարազատներին, փորձում էին ապահովություն գտնել և անցնելով սահմանը տարածվում էին Կարսի և Արարատյան երկրի զանազան վայրերում: Բայց պետք է նշել, որ Կովկասի հայոց բարեգործական ընկերության ընդունած նոր կանոնադրությունից հետո առաջացավ մի նոր դժվարություն, քանզի ընկերության խորհուրդն այլևս իրավունք չուներ իր մոտ պահել գաղթականներին օգնելու համար նվիրաբերված ու տեղական վարչությունների գումարներն այն պարզ պատճառով, որ այսուհետև ընկերության մասնաճյուղերն անկախ ընկերություններ պիտի դիտվեին: Անասելի զրկանքներ կրած, մերկ ու սովահար գաղթականների մի մասն արդեն հասել էր Թիֆլիս ու Բաքու: Հասկանալով, թե ինչ ահռելի նյութական միջոցներ են հարկավոր այդ համատարած թշվառության առաջն առնելու և գաղթականների տառապանքները մասամբ ամոքելու համար, ընկերության նախագահ Ա.Անանյանը Խորհրդի անդամների համաձայնությունը ստանալով՝ 1896թ. սեպտեմբերի 10-ին հարկադրված դիմում է Թիֆլիսի նահանգապետին՝ խնդրելով նրա միջնորդությունը, որպեսզի հնարավորություն տրվի ընկերությանը՝ հանգանակություն կազմակերպել հոգուտ թուրքահայ գաղթականների: Նախագահ Ա.Անանյանը իր գրության մեջ ներկայացնելով Կովկասում խմբված հազարավոր գաղթականների ծանր նյութական վիճակը, շեշտում է նրանց օգնելու համար

հանգանակություն կազմակերպելու կարևորությունը, քանի որ ձմռան մոտենալուն պես նրանք կամ սովամահ կլինեն, կամ զոհ կգնան վարակիչ հիվանդություններին:[1] Սակայն, Թիֆլիսի նահանգապետը 1896թ. հոկտեմբերի 5-ի գրությամբ Խորհրդին տեղեկացնում է, որ «Կովկասի կառավարչապետի դիվանատունը, սույն հոկտեմբերի 2-ի հաղորդագրությամբ, ծանուցել է կառավարչապետի օգնական գեներալ կոմս Տաղիշչևին մերժել Ռուսաստան գաղթած թուրքահայերի օգտին դրամական հանգանակություն կազմակերպելու խնդրանքը»:[2]

Այսպիսով, Խորհրդին չի հաջողվում հանգանակության թույլտվություն ստանալ, բայց աղետի սարսափելի չափերը, ինչպես նաև մամուլում տեղ գտած տեղեկություններն ու հավաստի նկարագրությունները, ինքնաբերաբար հասարակությանը դրդեցին օգնության ձեռք մեկնել գաղթականությանը: Կաղզվանի տեղական վարչության նախագահը 1896թ. հոկտեմբերի 2-ի գրությամբ հայտնում է, որ գաղթականները սոսկալի, աննկարագրելի ծանր վիճակում են, և նրանց շրջանում տարածված է տիֆ հիվանդությունը, հապաղել չի կարելի, հարկավոր է օգնություն, քանի որ տեղական միջոցները բավարար չեն: Խորհրդի անդամները միանշանակ հասկանում էին, որ անհրաժեշտ է օգնության հասնել Կաղզվանի վարչությանը, բայց խնդիրը նրանում էր, որ չկար մի աղբյուր, որից հնարավոր լիներ այդ օգնությունը ստանալ: Միակ հնարավոր միջոցը փոխարինաբար ընկերության կողմից ուսուցչական ցենզի համար տրամադրվելիք գումարից մի որոշ գումար վերցնելն էր: Քննության առնելով ստեղծված ծանր իրավիճակը, Խորհուրդն ի վերջո որոշում է կայացնում ուսուցչական ցենզի գումարից 250ռ. փոխառնել և ուղարկել Կաղզվանի վարչությանը, միևնույն ժամանակ, խնդրելով վարչությանը մանրամասն տեղեկություններ ուղարկել Խորհրդին գաղթականների վիճակի մասին, հետագայում ցուցադրվող օգնությունն առավել նպատակային դարձնելու համար:[3] Շուտով Խորհուրդը զանազան վայրերից սկսեց կամավոր նվիրատվություններ ստանալ՝ հօգուտ գաղթականների: Այդ նվիրաբերված գումարներն արդեն Խորհրդին հնարավորություն են տալիս ավելի ակտիվ գործունեություն ծավալել գաղթականներին օգնելու գործում: Գաղթականների խորհուրդը 500ռ. դրամական նվիրատվություն է ստացել՝ «-Զարգարյան-Վարդանյան ընկերներ» հաստատությունից, որն, ինչպես նաև հետագայում ստացված դրամական նվիրատվությունները, կանոնավոր կերպով ընկերությունն ամբողջությամբ գործադրել է թուրքահայերին

[1] ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.39, թ. 77-80:
[2] Տես՝ նույնը, թ.91-92:
[3] ՀԱԱ. Ֆ. 28, ց.1, գ.39, թ.87-90:

սովից ու վարակիչ հիվանդություններից փրկելու համար:[1] Բազմաթիվ գաղթականներ ամեն օր դիմում էին ընկերության Խորհրդին՝ ապրուստի միջոց, սնունդ, կացարան տրամադրելու խնդրանքով: Գաղթականները, ցրված լինելով քաղաքի տարբեր մասերում, գտնվում էին խղճալի, թշվառ վիճակում: Նրանց օգնելը դրամ տրամադրելով անհնարին էր դառնում այն պարզ պատճառով, որ Խորհուրդն այդքան մեծ դրամական միջոցներ չուներ և զուրկ էր նաև դրամ հանգանակելու հնարավորությունից: Բացի այդ, դրամ բաժանելն աստիճանաբար աննպատակահամար էր դառնում, քանի որ գաղթականներն անծանոթ լինելով երկրին, տեղական պայմաններին, կարոտ լինելով սննդի, խնամքի, ապահով կացարանի, շատ հաճախ անկարող էին լինում ընկերության կողմից իրենց տրամադրված նյութական միջոցները ճիշտ և նպատակային ծառայեցնել: Հետևաբար, անհրաժեշտություն առաջացավ այլ կերպ կազմակերպել նրանց ցուցաբերվող օգնությունը: Բայց մինչ այդ մասին վերջնական որոշում կայացնելը, Խորհուրդն իր անդամներից ձևավորում է հատուկ՝ «Գաղթականական հանձնաժողով», որին հանձնարարական է տրվում մոտիկից ծանոթանալ գաղթականների վիճակին և Խորհրդի հաջորդ նիստին լսել այդ հանձնաժողովի ներկայացրած զեկույցն ու դրանից հետո միայն որոշել գաղթականներին օգնություն ցուցաբերելու առավել արդյունավետ ու ճիշտ եղանակը: Խորհրդի որոշմամբ այդ հանձնաժողովի անդամներ են նշանակվում՝ Ս. Հարությունյանը, Վ. Արծրունին և Հ. Քոչարյանը:[2] Այսպիսով, Թիֆլիսում ապաստանած գաղթականներին օգնելու գործը Խորհուրդն արդեն հանձնարարեց իր կողմից ընտրված «Գաղթականական հանձնաժողովին»: Հանձնաժողովը, շրջելով Թիֆլիսի թաղամասերում, ճշտում է գաղթականների կացությունը և մի շարք միջոցներ է ձեռնարկում սովից ու հիվանդություններից նրանց փրկելու ուղղությամբ: Գաղթականների վիճակը քննող հանձնաժողովն արդեն 1896թ. հոկտեմբերի 18-ին Խորհրդին է ներկայացնում իր զեկույցը Թիֆլիս եկած գաղթականների իրական վիճակի մասին: Համաձայն ընկերության Խորհրդի կարգադրության՝ հանձնաժողովը ծանոթանալով գաղթականների իրական վիճակին և հավաքած լինելով անհրաժեշտ տեղեկություններ իր զեկույցում, առավել տեսանելի է դարձնում գաղթականներին օգտակար լինելու արդյունավետության եղանակները: Ըստ հավաքած տեղեկությունների, Թիֆլիս եկած գաղթականներին կարելի էր բաժանել երեք խմբի: Առաջին. համեմատաբար ապահով վիճակ ունեցողներ, երկրորդ. աշխատելու ընդունակ, բայց անգործ մնացած ու ժամանակավորապես օգնության կա-

[1] Տես՝ նույն տեղում, թ.93:
[2] ՀԱԱ, ֆ. 28,ց.1,գ. 39, թ. 91-92:

րոտ գաղթականներ, և երրորդ. հիվանդներ, ծերեր ու երեխաներ, որոնք կարոտ էին ավելի երկարատև օգնության: Հանձնաժողովը նշում էր, որ գաղթականներն առաջին հերթին կարիք ունեն բնակարանի, սննդի և տաք անկողնու, քանի որ ապրում էին ցուրտ ու խոնավ կացարաններում, որի արդյունքում շատերը հիվանդանում և նույնիսկ մահանում են: Նկատի ունենալով այդ հանգամանքը, հանձնաժողովն առաջարկում է 6 ամիս ժամկետով և 25ռ. արժողությամբ Հավլաբարում վարձել մի բնակարան ու այնտեղ փոխադրել ամենակարոտ գաղթականներին: Սննդի հարցը կարգավորելու համար հանձնաժողովն անհրաժեշտ էր համարում պայմանավորվել մի քանի ճաշարանների հետ, որպեսզի նրանք բարեգործական տոմսերով չքավոր և հիվանդներին կերակրեն՝ ճաշը 7 կոպեկ արժողությամբ: Անհրաժեշտ էր գաղթականների համար նաև հագուստ, անկողնային պարագաներ հայթայթել: Քանի որ վարձված բնակարանը չէր կարող բավարարություն տալ մեծաթիվ գաղթականների կացարանային հարցերի լուծմանը, ուստի հանձնաժողովն առաջարկում է Խորհրդին՝ դիմել հոգևոր իշխանությանը, որպեսզի նա մի քանի եկեղեցիներում համապատասխան սենյակներ հատկացնի գաղթականներին: Խորհրդի անդամները հավանություն տալով հանձնաժողովի առաջարկությանը, լսում են նաև փոխնախագահի զեկույցը, որով նա տեղեկացնում էր, որ մի խումբ կանայք գաղթականների համար հագուստ են հավաքել և հանձնել են Խորհրդին գավառներ ուղարկելու համար: Դրա հետ մեկտեղ նա առաջարկում է դիմել վիրահայոց թեմի առաջնորդին, խնդրելով ապաստան տալ գաղթականներին եկեղեցիներում և անկողնային պարագաներ գնել կամ դրանք կարել տալ դերձակներին: Խորհուրդն ընդունելով հանձնաժողովի առաջարկությունները, որոշում է դիմել Թիֆլիսի հայոց հոգևոր առաջնորդին և խնդրել համապատասխան կարգադրություն անել մի քանի եկեղեցիներում եղած կացարաններն ու փակված ուսումնարանների սենյակները իր տրամադրության տակ դնելուն, որպեսզի հնարավոր լինի տեղավորել գաղթականներին: Խորհուրդը նաև պատվիրում է հանձնաժողովին՝ անհրաժեշտության դեպքում մի նոր բնակարան վարձակալել, եթե ուշանա հոգևոր առաջնորդի կողմից անհրաժեշտ կարգադրությունը: Խորհուրդը Մ. Թումանյանին հանձնարարում է պատվիրել մոտ 20 անկողնային պարագաներ՝ վերմակներ, ներքնակներ և դրանք բաժանել առավել օգնության կարոտ գաղթականներին: Ընկերության տարեկան տեղեկագրերում, շրջաբերականներում և պահպանված այլ բնույթի փաստաթղթերում որոշակի տեղեկություններ կան, որոնք վկայում են այն մասին, որ Խորհուրդը մեծ ուշադրություն է դարձրել նաև գաղթականներին անհրաժեշտ բժշկական օգնություն ցուցաբերելու հարցին: Այսպես, Խորհուրդը կարգադրել է Գաղթականական հանձնաժողովին՝ բանակցել

Թիֆլիսի առողջապահական հարցերի վերատեսուչ բժշկապետ Հ. Ստեփանյանի հետ, հիվանդ գաղթականներին համապատասխան բժշկական օգնություն ցուցաբերելու համար: Խորհուրդը նաև հանձնաժողովին տրամադրել է ամսական 25ռ.՝ Հավլաբարում բնակարան վարձելու համար:[1] Քանի որ օր-օրի Թիֆլիս եկող գաղթականների թիվը մեծանում էր, և նրանք շարունակ Խորհրդից սնունդ, հագուստ, բանակարան, աշխատանք, բժշկական օգնություն և ճանապարածախս էին խնդրում այլ վայրեր գնալու համար նրա անդամները միակարծիք էին, որ ընկերությանը դիմող գաղթականների խնդիրներն անհետաձգելի կերպով պետք է քննել ու կարգավորել: Եվ քանի որ Խորհուրդը չէր կարող այդ բոլոր պահանջներին գոհացում տալ,լ հետևաբար ստեղծված իրավիճակում նպատակահարմար էր, որ արդեն գոյություն ունեցող Գաղթականական հանձնաժողովը մշտական դարձվեր ու գաղթականների հետ կապված բոլոր խնդիրների կարգավորումները հանձնվեր նրան: Խորհուրդը գտնում էր, որ անհրաժեշտության դեպքում կարելի է հանձնաժողովի կազմը մեծացնել, նրանում նոր անդամներ ընդգրկելով: Ընթացիք ծախսերի համար խորհուրդը որոշում է հանձնաժողովի տրամադրության տակ դնել մի որոշ գումար, ապա խորհրդի նիստերում լսել հանձնաժողովի զեկույցները ձեռնարկված գործողությունների մասին և դրան համարժեք նրան նոր հրահանգներ տալ: Հոգուտ գաղթականների Խորհուրդը բացի դրամական նվիրատվություններից, սկսում է հագուս, կտոր, սպիտակեղեն, բարձեր, վերմակներ, կոշկեղեն և այլ անհրաժեշտ իրեր ստանալ: Դրանց բաշխումը գաղթականներին ճիշտ կազմակերպելու համար նախ, այդ բոլոր նվերները գրանցվում էին առանձին մատյաններում, և հետո միայն ուղարկվում գաղթականներին: Ի դեպ, Թիֆլիսում գաղթականներին օգնելու գործն անհամեմատ ավելի լավ է կազմակերպվել, քան գավառներում, որտեղից մտահոգիչ տեղեկություններ էին ստացվում: Ահա, թե ինչ է գրել Բաթումի տեղական վարչությունը 1896թ. հոկտեմբերի 21-ին.<<Թշվառ գաղթականների հոսանքը դարձյալ շատացել է: Այդ թշվառների դրությունն անտանելի է, նրանց օրվա հացի կարոտությունը խիստ զգալի է: Վարչությունն իր սուղ միջոցներով և տեղի հասարակությունը, որ մեծամասամբ կազմված է բանվոր դասակարգից անզոր են առանց դրսի օժանդակության լիովին օգնության հասնել այդ խեղճերին>>:

Պետք է նշել, որ Խորհրդին նմանատիպ բովանդակությամբ գրություններ են ուղարկել նաև Կաղզվանի ու Կարսի վարչությունները: Կաղզվանի վարչությունը տեղեկացնում էր հագուստի, կոշկեղենի, տաք ծածկոցների մեծ կարիքի մասին: Խորհրդի նախագահի առաջարկությամբ

[1] ՀԱԱ, ֆ.28, ց.1,գ. 39, 94-96:

նպատակային է համարվում 200-ական ռ. հատկացնել այդ երեք վարչություններին, չսպասելով անգամ Կարսի և Բաթումի վարչություններից պահանջվող լրացուցիչ տեղեկություններին: Իր հերթին Գաղթականական մասնաժողովը խորհրդին ուղղված իր զեկուցագրում նշում է, որ թեև աշխատում է խիստ խնայողաբար ու արդյունավետ ծախսել իր տրամադրության ներքո դրված գումարները, բայց բնակարաններ չունենալու հետևանքով մեծ դժվարությունների է հանդիպում: Այդ առիթով փոխնախագահը հայտարարում է, որ խորհրդի հանձնարարությամբ կփորձի նորից բանակցել Թիֆլիսի հայոց հոգևոր առաջնորդի հետ, որը խոստացել էր եկեղեցիների գավիթներում սենյակներ հատկացնել գաղթականներին: Ի դեպ, Թիֆլիսի հայոց հոգևոր առաջնորդը 1896թ. Հոկտեմբերի 24-ի գրությամբ Խորհրդին հայտնում է, որ Սուրբ Սարգիս և Կաթողիկե եկեղեցիների վանահայրերը պատրաստ են գաղթական ընտանիքներ տեղավորել: Առաջնորդը հարմար է գտնում, որ Խորհուրդը մի քանի գաղթական ընտանիքների էլ ուղարկի Ծիրանավորի և Նավթլուղի ուխտատեղիներ, որտեղ դատարկ սենյակներ կան: Բայց Խորհրդի անդամներն անբավարար են համարում հոգևոր առաջնորդի այդ կարգադրությունները, քանզի նրանք լիահույս էին, որ նա կհատկացներ Թիֆլիսի բազմաթիվ եկեղեցիների գավիթներում գտնվող դատարկ սենյակներից մի քանիսը: Մինչդեռ գաղթականներին պատսպարելու համար նա առաջարկում էր նրանց ուղարկել Նավթլուղ և Ծիրանավոր, ինչն անհնարին էր հեռավորության պատճառով: Խորհրդի մի քանի անդամներ առաջարկում են խնդիրը կարգավորելու համար դիմել Վեհափառ հայրապետին, իսկ որմանք էլ պահանջում են նորից բանակցել Թիֆլիսի հոգևոր առաջնորդի հետ, փորձելով բացատրել նրան գործի էությունը: Հանձնարարվում է փոխնախագահ Ա.Մելիք-Ազարյանին նորից բանակցել Առաջնորդի հետ սենյակների հատկացման խնդրով, այն որքան հնարավոր է արագ կարգավորելու համար:[1] Խորհուրդը հանձնարանում է Գաղթականական հանձնաժողովին այնպիսի բժիշկներ գտնել, որոնք չափավոր վարձատրությամբ գավառներ կգնան և բժշկական օգնություն կցուցաբերեն գաղթականներին: Չափազանց ծանր էր գաղթականների դրությունը նաև Վաղարշապատում, թեև Ամենայն հայոց կաթողիկոս՝ Մկրտիչ Խրիմյանը օգնում էր նրանց: Մինչև 1896թ.հոկտեմբերի 22-ը, ինչպես հաղորդում էր Վաղարշապատի տեղական վարչության նախագահ՝ Ա. Օհանջանյանը, Վաղարշապատ էին մտել 1270 գաղթականներ, որոնց մեծ մասը կաթողիկոսի կարգադրությամբ տեղավորվել էր զանազան տեղերում: Վաղարշապատում և Էջմիածնի գավառի գյուղերում այդ ժամանակ ապաստան գտած գաղթականների թիվը 500- ի էր հասնում, որոնց մեջ մեծամասնություն էին կազ-

[1] ՀԱԱ, ֆ. 28,ց. 1,գ. 39,թ. 98-101:

մում 1-ից մինչև 15 տարեկան երեխաները, կանայք, իսկ տղամարդիկ փոքրաթիվ էին: Գաղթականներին շուտափույթ օգնության ձեռք մեկնելու համար այդ դժվարին գործին են լծվում գլխավորապես Կարսի, Կաղզվանի, Երևանի, Վաղարշապատի և մասամբ Ալեքսանդրապոլի տեղական վարչությունները: Սակայն Խորհուրդն այս անգամ սոսկ նրանց միջոցներ մատակարարողի դեր չէր միայն կատարում: Օգնության գործը շատ բարդ էր, ուստի դրա կազմակերպումը կենտրոնացվում է Խորհրդի ձեռքում: Գաղթականների ամենաառաջին կենսական պահանջը շարունակաում էր մնալ հագուստն ու անկողնային պարագաները:

Թիֆլիսում, Բաքվում, մինչև իսկ Ռուսաստանի հայաբնակ վայրերում, հավաքվում էր մեծ քանակությամբ հագուստ, ինչպես նաև գնվում էր կտորեղեն,այլ անհրաժեշտ իրեր ու այդ բոլորն ուղարկվում էր Աղստաֆա, ուր Խորհուրդը կազմակերպել էր մի փոքրիկ օժանդակ մարմին, որտեղից և այդ օգնությունն ուղարկվում էր Իգդիր, Էջմիածին, Կարս և Կաղզվան: Հօգուտ տառապյալ գաղթականների 1896թ. հոկտեմբերին բարեգործականի Խորհուրդը դրամական նվիրատվություն է ստացել 1514 ռ., իսկ 1896թ. հոկտեմբերի 17-ից մինչև նեյեմբերի 8-ը նվիրաբերված հագուստեղենից Իգդիր ուղարկվել է 224 կտոր հագուստ, Կաղզվան՝ 305 կտոր, Կարս՝ 458 կտոր, ընդամենը՝ 987 կտոր հագուստ:[1] Երևանի տեղական վարչության 1896թ. նոյեմբերի 1-ի գրությամբ տեղեկություններ էր հաղորդվում Խորհրդին Երևանում ապաստանած գաղթականների և նրանց օգնելու համար վարչության կողնից ձեռնարկված միջոցառումների մասին: Հայտնվում էր, որ վարչությունը կարիք ունի թե՛ դրամի, թե՛ հագուստեղենի, և Խորհրդից խնդրում է հնարավորինս արագ դրամ և հագուստ հասցնել: Խորհուրդը որոշում է 200ռ. և հագուստեղեն ուղարկել Երևան: Գաղթականներին օգնելու համար շարունակվում էին Խորհրդին տրամադրվել դրամական նվիրատվություններ: Այսպես, 1896թ. նոյեմբերին այդ դրամական նվիրատվությունները ընդամենը՝ 2413ռ. 90կ. էին կազմել, որը նախկին նվիրաբերությունների հետ միասին հասնում էին 6466ռ. 40կ.:[2] Խորհուրդը գաղթականներին գործուն օգնություն ցուցաբերելու համար քննարկում է նաև Սոլոլակի էժանագին ճաշարանին նպաստ տրամադրելու առաջարկը: Ճաշարանի պատասխանատու տիկին Ծովանյանը Խորհրդի առաջարկության համաձայն 1896թ. հոկտեմբեր ամսից սկսած կերակրել էր ավելի քան 50-70 գաղթականների: Այդ ճաշարանից օգտվող գաղթականներին օգնելու համար Խորհուրդը խոստանում է նպաստ տալ ճաշարանին, ծախսերը թեթևացնելու նպատակով: Որոշվում է Սոլոլակի ճաշարանին հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների

[1] ՀԱԱ, ֆ. 28,ց.1,գ. 39, թ.106-109:
[2] Տես նույն տեղում, թ.110-113:

համար 100ռ. նպաստ տալ: Հօգուտ գաղթականների դրամական նվիրատվությունները 1896թ. նոյեմբերի 22-ին կազմել են ընդամենը՝ 275ռ., որը նախկինում ստացվածների հետ հասնում էր 6741ռ. 40կ.:[1] Երևանի տեղական վարչության նախագահ Գ.Ղարաջյանը մի մասնավոր նամակում Խորհրդին տեղեկացնում է, որ ոչ թե հարյուրներ այլ հազարներ են հարկավոր կարիքավոր գաղթականներին օգնության ձեռք մեկնելու համար: Իրավիճակն այնքան լուրջ էև, որ անհրաժեշտ է մի հիվանդանոց հիմնել, ուր կտեղավորվեին 50-60 հիվանդ գաղթականներ: Խորհուրդը նկատի ունենալով այդ տեղեկությունները, որոշում է Երևանի վարչությանն ուղարկել 200ռ. գումար՝ հիվանդ գաղթականներին բժշկական օգնություն ցուցաբերելու: Բաքվից 1896թ. նոյեմբերին Համբարձում Մելիքյանը պատրաստակամություն է հայտնում օգնել գաղթականներին և հեռագրով Խորհրդին տեղեկացնում է 750ռ. գումար ուղարկելու մասին, որը բաժանվելու էր Կաղզվանի, Իգդիրի և Կարսի վարչություններին՝ յուրաքանչյուրին 250-ական ռ.: Նաև նրանց ուղարկվելու էր հագուստ, որից 4 արկղը Իգդիր, իսկ 3 արկղը՝ Կաղզվան:

Խորհուրդը հօգուտ գաղթականների 1896թ. դեկտեմբերի 6-ի տվյալներով ստացել է 2639ռ. դրամական օգնություն, որը նախկինում ստացվածների հետ միասին կազմում էր՝ 10.222ռ. 40կ.:[2] Խորհրդի կողմից Իգդիր առաջարկություն է արվում գաղթականներին բժշկական օգմություն հասցնելու պատաստակամության մասին: Այդ առաջարկությանն Իգդիրից 1896թ. նոյեմբերի 25-ին պատասխանում է Հմայակ վարդապետ Արշարունին: Նա տեղեկացնում է, որ խորհրդակցելով տեղի բժիշկ Չիլինդինովի հետ, որը գլխավորում է տեղի հիվանդանոցը, եկել են այն եզրակացության, որ շրջիկ բժիշկն անկարող է մոտ 150 հիվանդի այցելել և բուժել, որոնք ցրված են զանազան գյուղերում: Բացի դրանից, հիվանդ գաղթականները գտնվում են առողջապահական առումով այնպիսի վատ պայմաններում, որ ցուցաբերվող բժշկական օգնությունն անգամ ոչ մի օգուտ չի կարող տալ: Այդ իսկ պատճառով Չիլինդինովն առաջարկում է Իգդիրում մի ժամանակավոր հիվանդանոց բացել ձմռան ամիսների համար և հանձն է առնում իր երկու օգնականների հետ մասին կառավարել այդ հիվանդանոցը: Ըստ նրա՝ եթե հիվանդանոցը տեղակայվի այժմ փակված դպրոցի շինության մեջ, ապա դեկտեմբեր-մարտ ամիսների համար որպես ծախս կպահանջվի 1000-1200ռ.: Հմայակ վարդապետ Արշարունին ծանուցում է Խորհրդին, որ տեղական ուժերն ու միջոցները չեն ներում այդ հիվանդանոցի ծախսերը հոգալու համար: Խորհուրդը, քննարկելով վերը հիշատակված խնդիրը, գալիս է հետևյալ եզրակացությանը՝ ավելի

[1] Նույն տեղում, թ. 114-117:

[2] ՀԱԱ. ֆ. 28,ց. 1,գ. 39,թ. 126-129:

նպատակահարմար է ընդունել Իգդիրում ժամանակավոր հիվանդանոց բացելու առաջարկը և հիվանդներին գյուղերից փոխադրել այնտեղ: Որոշվում է տեղեկացնել Հմայակ վարդապետին, որ ընդունվում է բժիշկ Չիլինդինովի առաջարկությունը, և Խորհուրդն ինքը կհոգա հիվանդանոցի համար պահանջվող ծախսերը: Դրա հետ մեկտեղ Խորհուրդն առաջարկում է Հմայակ Արշարունուն՝ դիմել բժշկին և խնդրել, որ նա կազմի անհրաժեշտ դեղերի մի ցուցակ և ուղարկել խորհրդին: Խորհրդի որոշմամբ Հմայակ վարդապետին է ուղարկվում 300ռ. գումար և կտորեղեն՝ գաղթականների կարիքները հոգալու համար: Վ. Արծրունուն հանձնարարվում է բանակ- ցել Թիֆլիսի դեղորայքի պահեստարանի կառավարչի հետ՝ պարզելու համար, թե արդյոք նրանք կհամաձայնեն գաղթականներին ձրի կամ զեղջով դեղեր տրամադրել:[1] Գաղթականների խորհուրդը նվիրատվություն է ստացել նաև Չիթախյանի դուստրերից: Նրանք գաղթականներին նվիրել են 2948 արշին կտավ և թելեր: Այդ ամենի արժեքը կազմել է 460ռ.45կ.:Այդ նվիրատվությունից Կարսի վարչություն է ուղարկվել 800 արշին կտավ, 100 հատ թել, Իգդիրին՝ 800 արշին կտավ, 63 հատ թել,- Վաղարշապատին՝300 արշին կտավ, Բաթումի վարչությանը 325 արշին կտավ: Ընդամենը 2225 արշին, մնացած 723 արշինը պահվում է Խորհրդում Թիֆլիսի գաղթականների համար:[2] Խորհուրդը 1896թ. նոյեմբերի 28-ին և դեկտեմբերի 2-ին ստացել է Աստրախանի թեմի առաջնորդ Արիստակես արքեպիսկոպոս Սեդրակյանի երկու գրությունները:

Առաջին գրությամբ սրբազանը հայտնում էր, որ Աստրսխսնի բարեպաշտ հայությունը ինքնահոժար պատաստակամությամբ ցանկանում է դրամով և հագուստով մի փոքր թեթևացնել ազգակիցների ծանր վիճակը: Սրբազանը Խորհրդին է ուղարկում այդ նպատակով նվիրաբերված 1600ռ., խնդրելով ընկերության ճյուղերի միջոցով այն գործադրել գաղթականների համար: Երկրորդ գրությամբ նա ուղարկում է ևս 1400ռ., այսինքն՝ ընդամենը 3000ռ.:[3] Գաթականական հանձնաժողովը 1896թ. դեկտեմբերի 27-ի նիստում Խորհրդին զեկույց է ներկայացնում իր կազմն ուժեղացնելու մասին: Մատանշելով այն հանգամաքը, որ Վ.Արծրունին զբաղվածություն ուներ ընթերցարանում, Ս.Հարությունյանն անհետաձգելի գործերով մեկնելու էր քաղաքից, իսկ դրան հակառակ գաղթականների թիվը գնալով մեծանում էր և բացի այդ մոտենում էին առաջիկա տոները, որոնց ժամանակ կարիք էր լինելու դրամ, հագուստ բաժանել գաղթականներին, ուստի հանձնաժողովն անկարող կլիներ այդ գործը լիարժեք իրականացնել իր փոքրաթիվ անդամների միջոցով: Հետևաբար,

[1] Տես՝ նույն տեղում, թ.124-125:
[2] Նույն տեղում, թ.127-128:
[3] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1,գ. 39 ,թ.130-133:

նրանք խնդրում են նոր անձանց հրավիրել՝ հանձնաժողովին աջակցելու համար: Խորհուրդը որոշում է հրավիրել Գ.Վարդանյանին, Հ. Ամիրյանին, Կ. Գյուլնազարյանին և այլոց Գաղթականական մասնաժողովին աջակցելու նպատակով: Ընկերության Խորհուրդը, ըստ 1896թ. դեկտեմբերի տվյալների գաղթականներին օգնելու համար ստացել էր 1867ռ.: Նախկինում ստացած գումարների հետ միասին այն կազմում էր ընդամենը՝15.611ռ.40կ.:[1] Ծննդյան տոների առթիվ Խորհուրդը 1896թ. դեկտեմբերին որոշում է գաղթականների ու տառապյալների գումարից 350ռ. հանձնել Գաղթականական հանձնաժողովին, որից 200ռ. պետք է բաժանվեր գաղթականներին, իսկ 150ռ. տեղի տառապյալներին: Վաղարշապատի տեղական վարչությունը 1896թ. դեկտեմբերի 28-ի գրությամբ Խորհրդին տեղեկություններ հայտնելով գաղթականների վիճակի մասին, նշում էր, որ ստացել է Խորհրդի կողմից ուղարկված գումարն ու հագուստեղենը, ինչպես նաև հայտնում է Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանցի միջոցով ևս մի արկղ հագուստ ստանալու մասին, որը քանի որ թանկարժեք էր, վարչությունը որոշում է կայացնում աճուրդի հանել և դրանից գոյացած գումարով հարմար հագուս գնել գաղթականների համար: Վարչությունը հայտնում է, որ թեև ստացել է գումար և հագուստեղեն, բայց դարձյալ դրանց կարիքն ունի և հատկապես զինվորական շինելների:[2] Խորհրդի 1896թ. ելքի և մուտքի հաշիվների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 1896թ. ընթացքում ծախսել է տառապյալների և գաղթականների համար 12096ռ.48կ., իսկ այդ թվականին ի նպաստ գաղթականների և տառապյալների նվերները եղել են 16.320ռ.12կ. արժողությամբ[3]: Նշենք, որ Խորհուրդը 1896թ. ընթացքում գաղթականների օգտին ստացել է 19.253ռ.32կ. գումար: Այդ գումարների մեջ էին հետևյալ խոշոր նվիրատվությունները՝ Աստրախանի թեմի առաջնորդ Արիստակես արքեպիսկոպոս Սեդրակյանի կողմից հավաքված 4000ռ., Գևորգյան, Կրասիլնիկյան, Ե.Փիթոյան ընկերության, Գ.Աբիսողոմոնյանի, Արմավիր տեղական վարչության 1000-ական ռուբլիները:[4] Գաղթականների նյութական և առողջական ծանր վիճակի հետևանքով անհրաժեշտություն է առաջանում մաքառել նաև վարակիչ հիվանդությունների դեմ: Թիֆլիսում այդ գործը բավականին հեշտ է կազմակերպվում: Գաղթականական հանձնաժողովը դիմում է Թիֆլիսի քաղաքային բժշկական մասի կառավարիչ բժիշկ Հ. Ստեփանյանին, որը հանձն է առնում գաղթականներին բժշկական օգնություն

[1] Տես՝ նույն տեղում, թ.136-138:
[2] Նույն տեղում, գ. 41,թ. 4-7:
[3] ՀԱԱ, ֆ. 28,ց. 1,գ. 41,թ. 139-144:
[4] Տես՝ նույն տեղում, թ.126-129:

հասցնելու գործը: Նրա կարգադրությամբ Թիֆլիսի բոլոր թաղային բժիշկներն անվճար բուժում և խնամում են հիվանդ գաղթականներին, իսկ դեղորայքը դարձյալ անվճար տրվում էր քաղաքի դեղատներից: Բարեգործականի խորհուրդը 1897թ. Թանդոյան եկեղեցուն կից հիվանդանոց է բացում, ուր և սկսում են ավելի արդյունավետ կերպով բուժում ստանալ գաղթականները: Եթե Թիֆլիսում հիվանդությունների դեմ պայքար մղելը, հիվանդ գաղթականներին բժշկական օգնություն ցուցաբերելը քիչ թե շատ հեշտությամբ էր կատարվում, ապա նույնը չէր կարելի ասել գավառների մասին: Այնտեղ այդ գործի կազմակերպումը հանդիպում էր բազմաթիվ դժվարությունների: Գաղթականների շրջանում տարածված տիֆն ու այլ տարափոխիկ հիվանդությունները չափազանց ծանր իրավիճակ էին ստեղծում գավառներում: Ընկերության Խորհուրդը, հասկանալով ստեղծված իրավիճակի ողջ լրջությունը, դիմում է Երևանի և Կարսի նահանգապետերին, խնդրելով թույլ տալ Իգդիրի, Կարսի շրջանում գաղթականների համար հիվանդանոցներ բացել:[1] Սակայն Խորհրդի այս խնդրանքը մերժվում է: Խորհրդին Կարսի զինվորական նահանգապետը 1897 թ. փետրվարի 16-ի գրությամբ հայտնում է, որ <<Կարսի շրջանում հիվանդ գաղթականների թիվն աննշան է, հետևաբար հարկ չկա նրանց համար առանձին հիվանդանոց բացել>>:[2] Թեև 1896թ. դեկտեմբերի 11-ի բարձրագույն հրամանով թույլատրվում է Ռուսաստանի տարբեր վայրերում հանգանակություններ կազմակերպել հոգուտ փախստական թուրքահայերի, բայց միայն այն պայմանով, որ բոլոր նվիրատվություններն ուղարկվեն Կովկասի կառավարչապետին, իսկ օգնության գործը հանձնվի կառավարչական օգաններին: Այդ կարգադրության հիման վրա, 1897թ. հունվարի 10-ին կառավարչապետի պաշտոնակատարը հրապարակում է մի շրջաբերական, որով համապատասխան հրահանգներ է տալիս պետական վարչություններին՝ նպաստներ հավաքելու և դրանք փախստականներին բաժանելու կարգի մասին: Բարեգործական ընկերությունը փաստորեն այլևս չէր կարող թուրքահայ գաղթականների համար հատուկ նվերներ ընդունել և այսուհետև ընկերության կատարելիք գործը լինելու էր տառապյալներին օգնելը, բայց նա կարող էր գաղթականներին սոսկ որպես տառապյալներ դիտել, որոնց օգնելու իրավունքը պարզ որոշված էր իր կանոնադրությամբ: Տառապյալներին օգնելու համար 1897 թ. ընթացքում ստացված նվիրատվությունները 15.886 ռ. 62 կ. են կազմել: Դրանց մեջ ամենախոշորը՝ 10.000 ռ. նվիրվել էր Առաքել Ծատուրյանի կողմից: Թեև բարձրագույն իշխանության կողմից դժվարություններ էին ստեղծնել գաղթականների համար օգնություն հանգանակելու, բայց, այ-

[1] Նույն տեղում, թ.14-16:

[2] Նույն տեղում, թ.31-34:

նուամենայնիվ, թե՛ բարեգործական ընկերությունը, և թե՛ հայ հասարակությունը ջանքեր էին գործադրում այդ գործը գլուխ բերելու: Թուրքահայ գաղթականությանը բաժին ընկած աղետն այնպիսին չէր, որ հնարավոր լիներ կարճ ժամանակամիջոցում վերացնել: Հետևաբար, թուրքահայ գաղթականներն իրենց խնդիրներին լուծում տալու համար դեռ շաունակելու էին երկար դիմել բարեգործական ընկերությանը: Ինչպես հայտի է, 1898թ. մարտին հրապարակվում է բարձրագույն հրամանը, որով ի հաստատում Կավկասի կառավարչապետի առաջարկության և համաձայն պետական խորհրդի, թուրքահայ գաղթականներին մեկ տարի ժամանակ էր տրվում հայրենիք վերադառնալու համար: Այդ հրամանից հետո մայիսից սկսած գաղթականները սկսում են վերադառնալ հայրենիք, որը դեկտեմբերի սկզբներին գնալով ավելի լայն թափ է առնում: Թուրքահայերի վերադարձը դեպի հայրենիք կատարվում էր երեք ճանապարհով: Առաջինը՝ Կարսի վրայով, երկրորդը՝ Երևանով դեպի Բայազետ, ապա Վանի կողմերը և երրորդ՝ առավելապես Բաթումի վրայով և այստեղից էլ ուղևորվում էին ր ծովեզերյա քաղաքներ՝ Տրապիզոն, Սամսուն, Կ.Պոլիս և ապա Բայբուրտ, Էրզրում, Սվազ, Խարբերդ և նույնիսկ ավելի խորքեր: Սեպտեմբերից սկսած Բաթումի վրայով սկսեցին հարենիք վերադառնալ ոչ միայն այն գաղթականները, որոնք բնակվում կամ ցուցակագրված էին Բաթումում, այլև մեծ մասամբ այնպիսիները, որոնք զանազան տեղերից, օրինակ Թիֆլիսից, Ալեքսանդրապելից, Ղարսից գալիս էին Բաթում: Առանց տեղական ոստիկանության կողմից որևէ վկայաթղթերի, նրանք դժվարություններ էին առաջացնում, թե իրենց և թե՛ վարչության համար, որը ստիպված էր լինում միջնորդել ուր հարկ է և երաշխավորել, որ նրանք տաճկահայ գաղթականներ են, որպեսզի ոստիկանությունը նրանց անցաթուղթ տրամադրեր: Գաղթականների այդ մեծ հոսանքին օգնելու համար վարչությունն ամեն ջանք գործի էր դնում, բայց իր սուղ միջոցներով անկարող էր բավարարություն տալ բոլոր կարիքավորներին: Վարչությունը դիմում է ընկերության Խորհրդին՝ խնդրելով օգնություն, բայց վերջինս նույնպես բազմաթիվ կարիքներ ուներ և միայն կարողանում է 500ռ. գումար ուղարկել: Օգնության նմանատիպ դիմումներ են հղվում նաև Բաքվի Մարդասիրական ընկերությանը, Մոսկվայի հայոց եկեղեցիների խորհրդին, բայց դրանք անհետևանք են մնում: Վարչությունը հասկանում էր, որ ստեղծված իրավիճակում հույսը պետք է դնի սեփական ուժերի և միջոցների վրա: Մեծ ծավալի հանգնակություն կազմակերպելը դժվարանում էր այն պատճառով, որ ժողովրդի վրա այդ ժամանակ ծանրացած էր նաև նոր եկեղեցու շինության համար հանգանակվող գումարի հոգսը: Այդ հանգամանքից ելնելով, վարչությունը ճանապարհածախս էր տրամադրում բազմաթիվ խնդրատուներից միայն ամենակարոտյալնե-

րին և այն էլ շատ աննշան գումարով, անձամբ հոգալով մեկնողների տոմսակների ծախսը: Այդ նպատակով վարչությունը բանակցել էր շոգենավային վարչությունների հետ: Վերջիներս համաձայնություն էին տվել իրենց դիմող գաղթականներին տոմսի սովորական գնից զեղջ կիրառել 50-30 տոկոսով, որի համար վարչությունն իր պարտքն էր համարում հրապարակավ շնորհակալություն հայտնել: Երբ Բաթումի վարչության միջոցները լիովին սպառվում են, նա սկսում է կատարել սոսկ միջնորդի դեր վերադարձող գաղթականների և այդ շոգենավային վարչությունների միջև: Վարչությունը տառապյալ գաղթականների վրա նպաստի, դեղորայքի և ճանապարաձախսի համար տրամադրել է 1996 ռ. 03 կ. գումար: Վարչության կողմից արված ճանապարհաձախսը կազմում էր 1045 ռ. գումար, և այդ գումարով վարչության օգնությամբ հայրենիք են ճանապարհվել մոտ 700 գաղթականներ, չհաշված այդ թվում մինչև 5 տարեկան երեխաները, որոնց շոգենավերն անվճար էին տեղափոխում: Բացի վարչությունից ճանապարհաձախս ստացածներից, 1000 գաղթականներ էլ ուղևորվել են իրենց ծախսերով: Վարչությունը միայն միջնորդել է ոստիկանությանն անցաթղթեր տալու և շոգենավային ընկերություններին նրանց զեղջով տոմսակներ տրամադրելու համար: Այդ ժամանակահատվածում 267 անձանց նպաստ է տրվել, որն ընդամենը կազմել է 789 ռ.: Նպաստներ են տրվել նաև ամսական 8-10 գաղթական ընտանիքների, տարվա ընթացքում ընդամենը՝ 383ռ., և պատահական նպաստ 160 անձանց, որոնք դիմել են վարչությանը, 404ռ.: Բացի դրանից վարչությունը դեղատանը վճարել է 1897թ. պարտքը և 1898թ. հաշիվը՝ 89 ռ. 13 կ. գումար: Բոլոր այս ծախսերը եղել են գաղթականների համար:[1] Ի դեպ, Թիֆլիսում կազմվել էր նաև գաղթականներին խնամող մի հանձնաժողով, որի նախագահը նահանգապետի կինն էր: Այդ հանձնաժողովը դիմում է բարեգործականի Խորհրդին՝ տեղեկացնելով, որ վճռել է պահել Թանդոյան եկեղեցու բակում գտնվող հիվանդանոցը և խնդրելով համապատասխան նպաստ: Խորհուրդը գաղթականներին նպաստող հանձնաժողովին պատասխանում է, որ 1897 թ. դեկտեմբերի 1-ից մինչև 1898 թ. ապրիլի 1-ը հիվանդանոցի համար հատկացնելու է ամսական 150ռ. մինչև 25 հիվանդ լինելու դեպքում, և 250 ռ. մինչև 40 հիվանդի դեպքում:[2] Խորհրդի 1899 թ. հունվարի 2-ի նիստում զեկուցվում է, որ 1898թ. ժամանակահատվածում ամսական նպաստ են ստացել 5 գաղթական ընտանիքներ, որոնց նույն կարգով Խորհուրդը շարունակելու է 2-5 ռ. նպաստ տրամադրել հունվարի 1-ից սկսած: Փաստորեն Խորհրդի կողմից 1899 թ.հունվարի 2-ին կազմված նախահաշվով 26 գաղթական աշակերտների համար ծախս էր նա-

[1] ՀԱԱ, ֆ.28, ց. 1,գ. 86,թ. 49-51:
[2] Տես՝ նույն տեղում, թ.143-144:

խատեսված 1560ռ., իսկ մնացորդը հատկացվելու էր 1900 թ. Հունվարի 1-ից գաղթական աշակերտների պահպանությանը և այն կազմելու էր՝ 1400 ռ.:[1] Թիֆլիսի կանանց Նպաստամատույց մասնաժողովի նախագահ՝ Ս. Բիկովան արդեն 1898 թ. ապրիլի 6-ին Ա. Անանյանի խնդրանքով մի գրությամբ տեղեկացնում է, որ 1897 թ. նոյեմբերի 2-ից մինչև մարտ ամիսը Թանդոյան հիվանդանոցի պահպանության համար ընկերության կողմից իրեն ուղարկվել է 800 ռ. գումար: Կանանց Նպաստամատույց հանձնաժողովին 1898 թ. ապրիլին Խորհրդի գրությամբ հայտվում է, որ հիվանդ գաղթականներին տոների կապակցությամբ որոշակի գումար բաժանելու առաջարկը ընդունվել է, և այդ նպատակի համար Խորհուրդը պատրաստ է տրամադրել 150ռ. գումար:[2] Խորհրդի 1897թ.դեկտեմբերի 31-ի նիստում քննարկվել են նրա հաշիվները մինչև 1898թ. հունվարի 1-ը: Ըստ պահպանված հաշվեմատյանների հետևյալ պատկերն է ստացվում: Խորհրդի իրական ելքն ու մուտքը 1897 թ. համար հետևյալն էր՝ մուտք եղել էր 51.800 ռ. 94 կ., որից նվերներ հոգուտ տառապյալների՝ 15.636 ռ. 62 կ., Դանիական հանձնաժողովից 17.979 ռ. 4կ.: Ելքի հաշվում, որպես ծախս տառապյալների համար, թե՛ Թիֆլիսում, թե՛ այլ վայրերի մասնաճյուղերում 12.092 ռ. 41 կ.: Դանիական գումարից ծախսվել է թուրքահայ գաղթականների համար 14.947ռ.89կ., ընդհանուր ծախսը կազմել է 34.144 ռ. 74 կ.: Այսպիսով, առ 1-ը հունվարի 1898 թ. մնացորդը կազմել է 17.656 ռ. 20կ.: Խորհրդի նախագահը 1898 թ. սեպտեմբերի 4-ի նիստում զեկուցում է, որ Թիֆլիսի նահանգապետը նամակով դիմել է իրենց՝ հայտնելով, որ Թանդոյան եկեղեցու բակում գտնվող հիվանդանոցում կան 25 գաղթական հիվանդներ, և այլևս անհնարին է դարձել այն պահելը, որովհետև տիկնանց հանձնաժողովը ոչ մի միջոց չունի: Այդ իսկ պատճառով, որպեսզի հիվանդանոցը չմնա անօգնական, խնդրում է բարեգործական ընկերությանը նպաստ տրամադրել հիվանդանոցի պահպանության համար: Խորհրդի անդամները խորհրդակցելով որոշում են փոխարինաբար նահանգապետին ուղարկել Խուդադյանի կտակած գումարից 500 ռ.: Ռուսական բռնակալության առաջին հարվածները շուտով տեղացին հենց թուրքահայ գաղթականների գլխին: 50 հազար փախստականներ 1894-1896 թթ. ջարդերից փրկվելու, պատսպարվելու նպատակով անցել էին Այսրկովկաս ու հաստատվել հայկական գավառներում, և եթե նեղություն էին պատճառում, ապա միայն հյուրընկալ հայ աշխատավորներին, բայց ցարական կառավարությունն այդ էլ չէր հանդուրժում և փախստականներին ճզմելու, հալածելու գործը նրա առաջին ձեռնարկն էր, որն իրականացվեց դարասկզբին: Կառավարչապետ իշխան Գոլիցինը 1901 թ. նոյեմ-

[1] Նույն տեղում, գ. 59,թ. 15-16:

[2] Նույն տեղում, գ. 362,թ .3-5:

բերի շրջաբերականով նահանգապետերին ազդարարում է, որ նրանք հայտնեն իրենց նահանգի տարածքում գտնվող հայ փախստականներին, որոնք տարբեր ժամանակաշրջաններում՝ սկսած 1893թ. անցել են Այսրկովկաս, որ կարող են կամավոր հեռանալ կայսրության տարածքից, և այս դեպքում նրանց ցույց կտրվի համապատասխան աջակցություն, իսկ ով չի ցանկանա թողնել ռուսական հողը՝ նա պարտավոր է ռուսահպատակություն ընդունել և իր բնակված վայրում անդամագրվել կամ գյուղական համայքին կամ տվյալ քաղաքի քաղաքային դասին: Նոր հպատակները 1901 թ. ենթակա են զինվորագրության և հողաբաժիներ չեն ստանալու: Սույն կանոնները տարածվում էին մինչև 1901թ. փետրվարի 1-ը Այսրկովկաս անցած փախստականների վրա: Հիշյալ թվականից հետո եկածներն արտաքսվելու էին կայսրության սահմաններից: Այս շրջաբերականը հայ փախստականների համար չարիք դարձավ:[1] Պահանջվում էր, որ գաղթականները ցուցակագրվեն պետական հաստատություններում, երդվեն հպատակության համար, ձեռք բերեին ինքնության թղթեր և այս բոլորն իրականացվում էր ոստիկանական հետապնդումներով, շուրջկալներով ու կաշառատվությամբ: Բնական է, որ բոլոր փախստականները չէ, որ ցանկացան վայելել ռուսահպատակության բարիքները: Այսպես, ոստիկանությունը Բաքվում կազմում է 72 փախստական ընտանիքների ցուցակ, բայց նրանցից հավատարիմ հպատակության երդում տվեցին, և Բաքվի քաղաքացի գրվեցին 52 ընտանիք:[2] Երևանի նահանգային և Կարսի շրջանային վիճակագրական կոմիտեների քաղաքային և գյուղական հասարակությանն անդամգրվել էին 18.132 հոգի, համարյա բոլորը թուրքահայեր: Նրանք բնակություն էին հաստատել՝ Երևանում 3896 հոգի, Ալեքսանդրապոլում 2027, Նախիջևանում՝ 696, Կարսում՝ 10.082 և Կաղզվանում՝ 5594 հոգի:[3] Փախստականների մի զգալի մասը հրաժարվեց ռուսահպատակություն ընդունել և նորից հաշտվեց թուրքին հպատակվելու մտքի հետ, կամ եթե այդ անհնարին էր, նոր վայրեր ընտրեց ապրելու համար: Նրանք թողեցին Ռուսաստանի սահմաններն անցնելով կամ Թուրքահայաստան կամ Պարսկաստան: Ընդ որում, թուրքահայ փախստականների արտաքսումը սկսվում է 1902 թ. օգոստոսից: Բարեգործական ընկերության անդամ Հ. Առաքելյանն այդ խնդրի առթիվ <<Մշակ>> թերթում գրում է հետևյալը. <<1901 թ. ընթացքում լուծվեց մի հարց, որը վաղուց լուծման կարիք ուներ, դա 1894-1896 թթ. Թուրքիայում տեղի ունացած ջարդերից փախած մոտ 50 հազար հայ գաղթականների հարցն էր:

[1] **Դ. Անանուն,** Ռուսահայերի հասարակական զարգացումը 1901-1926թթ. հ., Վենետիկ 1926,էջ 8-12:

[2] <<Մշակ>> Թիֆլիս, 1902, N 222:

[3] <<Մշակ>> Թիֆլիս, 1903, N 200:

Թեև տեղի հայ ազգբնակչությունը, եղբայրական և մարդասիրական զգացմունքներից դրդված օգնում, պատսպարում էր թշվառ գաղթականներին, բայց այդպիսի խոշոր եկվոր տարրի կարիքներն ու բազում խնդիրներ լուծելու համար հայ ազգաբնակչությունը միայնակ անկարող էր, եթե, իհարկե, կառավարության հոգացության առարկա չդառնար, մանավանդ որ այդ եկվորներին հող տալն անկարելի էր: Եվ այդ իսկ պատճառով հենց սկզբից կառավարությունը ջանք գործադրեց, որ Թուրքիան նորից հետ ընդունի գաղթականներին և նրանց վերադարձնի իրենց հողերը: Բայց այդ ջանքերն անհաջողության մատնվեցին, ուստի և կառավարությունը գաղթականների վիճակը վերջնականապես որոշելու համար հրապարակեց բարձրագույն հարաման, որով իրավունք էր տրվում նրանց ապրել կայսրության տարածքում, ընդունելով ռուսահպատակություն: Հայրենիք վերադառնալ ցանկացողներին կառավարությունը ցուցաբերելու էր անհրաժեշտ աջակցություն:Այսպիսով գաղթականների վիճակը որոշված է>>:[1] Թեև հրապարակվեց գաղթականության հարցի կարգավորմանը վերաբերող բարձրագույն հրամանը, բայց, միևնույն է, թուրքահայ փախստականների խնդիրները 1901-1902 թթ. եղած կարգադրություններով և ստիպողական միջոցներով չլուծվեցին: Ռուսահպատակությունն այնքան անհրապույր էր, իսկ հայրենիքի կարոտն այնքան մեծ, որ փախստականներն ամեն միջոց գործադրում էին խուսափելու իրենց համար պատրաստված օղակից: Ուստի, 1896 թ. Ճաշակած սարսափների պատճառով Տաճկաստանից ռուսական տարածքում ապաստանած գաղթականները, 1902թ. օգոստոսից խմբերով սկսեցին վերադառնալ հայենիք՝ Կարսի վրայով: Նրանց վերադարձը դյուրին դարձնելու համար Վեհափառ հայրապետն առանձին կոնդակով պատվիրում է. <<Գնալ գաղթականների մոտ և հայտնել, որ նրանք աշխատեն ընդունել ռուսահպատակությունը, կամ վերադառնան Թուրքահայաստան կամ էլ անցնեն Պարսկաստան, որտեղից կարող են հայրենիք վերադառնալ Մակուի վրայով>>:[2] Թուրքահայ գաղթականները սկսեցին մեծ հոսքով վերադառնալ հայրենիք և նրանց վերադարձը հաջողությամբ կազմակերպելու համար պահանջվում էին մեծ նյութական միջոցներ: Այդ դժվարին գործը կարգավորելու համար բարեգործական ընկերությունը ձեռնամուխ եղավ համապատասխան քայլերի, ձգտելով արդյունավետ կերպով կազմակերպել և լուծել գաղթականների վերադարձի հետ կապված տարբեր բնույթի խնդիրներ: Այսպիսով, անհերքելի է այն փաստը, որ Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը ծանրակշիռ և արդյունավետ աշխատանք է իրականացրել թուրքահայ գաղթականության շրջանում, ձգտելով իր տեղական վար-

[1] Տես՝ նույն տեղում, 1902, N 2:

[2] <<Լուսա>> Թիֆլիս, 1902, N5:

չությունների միջոցով գործուն քայլեր ձեռնարկել վերահաս կորստից թուրքահայ գաղթականներին փրկելու, իսկ հետո նաև նրանց հայրենիք վերադարձն ապահով կազմակերպելու գործում:

Рузанна Акопян, Деятельность Армяно Кавказского Благотворителного Общества в сфере попечительства беженцев в 1894-1902гг. - Кавказское Армянское Благотворительное Общество было основано в Тбилиси в 1881г., при содействии Б. Навасардяна, Г. Арцруни, Г. Сундукяна и других представителей армянской интеллигенции. В 1894-1896гг. в Турции начались Гамидовские погромы по истреблению армян.Турецкие-армяни спасаясь от погромов, перешла в Закавказье.Там они оказались в тяжелом, безвыходном положении.Общество оказало финансовую и моральную подержку сотни тысячам обездоленным и голодным беженцам.В эти годы общество осуществило активную благотворительную программу, спасая многих беженцев от смерти.

**Ruzanna Hakobyan, The activit of Caucasus`s Armenian Charieable company in the sphere of immigrantion in 1894-1902** - . Caucasus`s Armenian Charitable Company was established in 1881 in Tbilisi by B.Navasardyan, G.Artsruni,G.Sundukyan and by other armenian intelectuals.From the day of foundation the Company has done many charitable programs.When in 1894-1896, during Hamid`s massacres, the Armenians had to go to Transcaucasia, the Company was in a bad situation.The company started to give material and moral help to a thousands of naked and hungry migrants.The Company implemented vigorous charitable programs during the before-mentioned years, saving many migrants from death.